## ԳԼՈՒԽ Բ.

Ամենայն ընութիւն մարդոյ ծնեալ 'ի յերեսս երկրին հայաստանեաց ունի պատիւ անուանիլ զինքն Հայ, յորմէ յազգէ և որում դաւանութեամբ որ իցէ հարկաւոր է նմայ խօսիլ և կարդալ Հայոց բառիւ և տառիւ։

## ԳԼՈՒԽ Գ.

Ամենայն ընութիւն մարդոյ թէ հայոց և թէ այլ ազգէ ծնեալ 'ի աշխարհն հայոց, և կամ 'ի տարբ աշխարհէ պանդխտացեալ 'ի հայս թէ արու և թէ էգ համահաւասարապէս կացցեն և ճնասցեն ազատ ընդ ամենայն գործս իւրեանց, ոչ ոք իցէ որ իշխեսցի 'ի վերայ ոչ ումեք, բայց գործս ձեռաց իւրեանց վարձատրեսցի ըստ իւրաքանչիւր գործոց ըստ Օրինաց Հայոց։

## ԳԼՈՒԽ Դ.

Պատուելի մեզ է սովորութիւնն Աստուածպաշտութեան հայաստանեաց սուրբ եկեղեցւոյն, որում աւանդեցաւ մեզ 'ի սրբոց մերոց առաքելոց Թադէոս և Բարդուղիմէոսէ շառաւիղեալ դաւազանն մինչև ցայսօր, որում աւանդ է մեզ ծայրագոյն աթոռն հայրապետութեան հայոց լուսա-